արդեամբ կատարեալ զբան աղմնին 'ի վերայ թագաւորին. և յոլովք 'ի բանից անտի վայելէին նմա. քանզի 'ի բազում որոգայթից Աստուծով զերծեալ ապրեալ՝ անկարծելի մարդկան։ Զի երբեմն 'ի յորս երէոց անկեալ յերիվարէն՝ դնէր անխլիրտ իբրև զմեռեալ, և ապա յառնէր խորհրդոյն [1] զորութեամբն։ Եւ դարձեալ, 'ի պատերազմելն ընդ բերդի ուրեմն, եկեալ նետ 'ի պարսպէն՝ հարկանէր զերեսն Գաբրիելի, որ կայր 'ի պարանոց նորա, և ապրէր նա յայնմանէ՝ հրեշտակային բարեխօսութեամբ։ Եւ այսպէս 'ի հաւաքեալ բարիսն՝ մնա ժամանել յերկնաւորն, հիւանդանայր զերկրաւոր կեանս, 'ի յիսներորդ երրորդ ամի կենաց իւրոց, յունուարի ամսեան 'ի քսան և հինգն. նստուց (եաղ) [2] .....

. . . . . .

յաւելեալ 'ի հայ թարգմանչէն, և պակասէն 'ի ժամանակագրութեանն Վախթանգայ, յորում փոխանակ այսոցիկ՝ դնին դարձեալք զգաւառանուանեն կրօնից հակառակ Պրոցն ուղղափառութեան, և զանլսողութենէ Հայոց՝ ձայնի Հշմարտութեան 'ի ժողովի անդ գուսարելոյ 'ի Դաւթէ։

1 Զիտաս խորհուրդ բառի ոչ իմացեալ Պրոսեայ՝ թարգմանէ Par la force de sa pensée, այս է՝ Զօրութեամբ իմացութեան իւրոյ։

2 Թերի մնայ ասա յօրինակի մերում Պատմութիւնս Վրաց՝ կամ 'ի թարգմանէն և կամ յընդօրինակողէ նորին անաւարտ թողեալ։ Վերջին բառն նատուցեալ վերաբերի առ Դեմետրէ՝ որդի Դաւթի, զոր կենդանեաւ իւրով եառ օծել Դաւթի՝ 'ի թագաւոր, ըստ օրինակի Սաղոմոնի՝ կարգելոյ յանուանակցէն իւրմէ 'ի մեծէն Դաւթէ՝ յարքայ Իսրայէլի։

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՅ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆՑ

ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ՀՌԻՓՍԻՄԵԱՅ

(Անտիպ թատերգութիւն. Հանեալ 'ի Հատաքակաց Գրատանէն Վենետկոյ)։

(Տե՛ս էջ 33, 118)։



ՉՈՐՐՈՐԴ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԿԱՐԼԷՆ, ԿԱԽԱՐԴ, ՄՈՆԹ

Կարլէն. Ո՞ւր ածես, տիկին. կարծէի յանապատ
Տեղի այս գործոց. բայց ասա Տրդատ . . . ։
Կախարդ. Չկարէ տեսանել մի երկնչիր, իշխան.
Գործ զոր խնդրես՝ ոչ է սովորական,
Որում բաւ իցէ սովորական տեղի.
Դիւրապէս շարժէի զհիմունս աշխարհի,
Եւ կարէի 'ի ծով զմեծ լերինս ձգել,

digitised by A.R.A.R.@

Քան զմարդատեաց սիրտ առ սէր բռնադատել.
Արասցուք սակայն. հզօր է արհեստ իմ։
Դու աստ 'ի յանկիւնս՝ մինչդեռ աշխատիմ՝
Ներկիւղ, անշարժ, մի ծնգամբ չոգեալ՝
Եւ վասն հոգոց՝ զսուր 'ի ձեռս ընկալեալ,
Համբեր մինչև խսպառ, տես և լուա։

Կարէն. Ահա հնազանդիմ, քաջապէս գործեա.
Եւ արա խնդրեմ թէ ծածկեալ իցեմք։

Կախարդ. Մի երկնչիր, ասեմ, աներկոյթք եմք,
Մինչդեռ մնան այս իսառնեալ յարեանց
Զար գիշերահաւուց, ոչ ոք 'ի բարձանց
Եւ ոչ յերկրէ կարէ զմեզ տեսանել.
Ցամենայն կողմանց զճանապարհ և փակել
Դիւր է. և մնիցս այս խորհրդական՝
Զօրութիւն ունի առ այս մարդկան՝
Զորմն և շինուածս երևեցուցանել.
Ապա, Մոնթ, մատիր, պարտ է մեզ սկսանել
Զխորհուրդս մեծամեծ։ Երիցս պատեա
Արիւնախառն մոմով զտեղիս և մաքրեա.
Բաւ է։ Այս տեղւոջ հաստատեա զխորան,
Դիր զհուր, 'ի վերայ զխունկ և չուան
Ահեկան ձեռամբ առեալ 'ի կախելոյ
Զխոտս տարածեա. բեր անօթ դինւոյ
Ընդ քիթս փսխելոյ գարշ մայրասպանի.
Բեր ես զպատկեր ինքեան Հռիփսիմէի
Ընդդէմ արևմտեան կողման կացո զնա.
Թուղթ, թանաք, գրիչ պատրաստ և արա,
Եւ աջ կռնրկէն արիւն առ իշխանին։
Արարեր։

Մոնթ. Արարի։

Կախարդ. Հռիփսիմէ և Կարէն՝
Նոքաւ աստ գրեա։ Գրեցեր։

Մոնթ. Գրեցի։

Կախարդ. Բարի է.
Թող թէ սկսանիմ, այժմ ամանակ է,
Եւ դու յայս կողմ՝ որ է հարաւայեան,
Ընկալեալ ըզդանակ՝ չոքեա որպէս իշխան։

(Զդէ զգաւազան իւր որ փոխի յօձ, և ընկալեալ 'ի ձեռն զկերոն, ածէ զնա երիցս շուրջ զխորա-
Աստուածք դժոխոց (երիցս ասէ), թագաւորք անդնդոց (երիցս), [նաև և ասէ).
Պլուտօ, Պոսէդաոնա, Լուցիֆէրա, Էքարէ,
Հռատամանթոս, Թիսիփոնէ, Փլեկեդօն, Լամենիտէս,
Սատիրս, Սկիլլա, Մէտուսա, Սատէնիս, (վառէ զկերոնն)
Այսպէս վառեսցի, բորբոքեսցի,
Այրեսցի սառեալ սիրտ Հռիփսիմէի։

(Տայ զկերոն Մոնթին, և ձգէ 'ի հուրն զմաղս, զխոտս, զչուան, և այլս ասելով)։

Բեզ ահագին Բերպերոս, եռալեզու եռակոկորդ,
Եռաղլուխ, եռաքիթ, եռապարանոց, ընծայեմ,

digitised by A.R.A.R.@

Պարգևեմ, մատուցանեմ զհաճոյական ծուխս ․
Այսպէս 'ի ծուխ լուծցին, 'ի բաց բարձցին,
Խափանեսցին, աւերեսցին, խորտակեսցին արգելմունք
Որք եղեալք 'ի մարդկանէ կամ յաստուածոցն ումեքէ,
Ի սիրելոյ արգելուցուն զՀռիփսիմէ ։ (մոմ առնու և ձգէ 'ի հուրն)։
Որպէս մատանց հնազանդի այս մոմ և հալի,
Անողորմ Հռիփսիմէի սիրտ՝ սիրով հալեսցի,
Եւ հնազանդիցի փափաքանաց Կարենի ։

(Զսպակ խոտոց դնէ 'ի գլուխ, և առեալ զցաւազան բոլորակ՝ առնէ և պատէ՝ 'ի ծածուկ մրմնջե-

Կատարեցաւ — Խորհուրդ լցաւ ։ (լով և երիցս զարկելով զերկիր՝ աղաղակէ)։
Ձեզ սանդարամետականաց — Առաջնեմ հրամանաց (բարձր ձայնիւ)։
Պատուիրեմ՝ երևել, — Շուրջ զպատկերաւս շրջել, (զարնէ զերկիր բազում)։
Փութով երևեցարուք, — Փութով հնազանդ լերուք.
Ապստամբք ոչ գան. — Փլութօ, զի՞նչ է այս բան ։ (զբոլորակ առնէ առելով)։
Զբոլորակ կրկնեսցուք, — Դարձեալ պատեսցուք, (դարձեալ մրմնջելով պատէ
Դուք Աքերոն, — Ստիքս, Փլէկէդօն, (և ասէ)։
Գետք դժոխոց — Դադարեցէք.
Ի մէջ ձերոց խառն ջրոց
Ընկղմեցէք և թաղեցէք ճանգուլթ Քարոն ։
Դուք Թիսիփոն, Ալէքդօ, Մէկէռա.
Որոց տանջել զհոգիս հրաման կայ.
Քո խարազանք խորտակեսցին, — Քո զարկօղք բազուկք չորասցին,
Քլօթօ, Ադրօբօս և Լաքիսիս, — Անողորմ քորք, որ զմարդկան որդիս
Մանրեալ յարագաց — Դերձան կենաց
Խիստ մկրատով — Հատանելով
Ցերկիր լռոզաց, — Տրտում սառւերաց,
Միշտ ուղարկէք — Մի՛ յաւէտ կտրէք ։ (Զարկէ զերկիր բազմիցս՝ աղաղակելով)։
Ձեզ երկու անգամ, — Ձեզ երեք անգամ,
Մեղուցեալ հոգիք, — Մահապարտ հոգիք,
Զամենագործական — Կրկնեմ զհրաման.
Առ փութացարուք, — Եւ հնազանդ լերուք
Ապա թէ . . . — Բայց ո՞ւր է արհեստ իմ.
Ինքն խառվիմ, ինքն զարհուրիմ ։ (Ի մէջ բոցոյ հրոյ ահագին Դև երևի և աղաղակէ)։

Դև. Զի՞նչ հրամայես, — Զի՞նչ բռնադատես.
Այս ամենայն — Գործ է ունայն,
Զի զՔրիստոս ստուգիւ — Որ պաշտէ սրտիւ,
Որպէս Հռիփսիմէ — Ի վերայ մեր է.
Գնա, — Լռեա.

Կարէն. Զի՞նչ լսեմ, երկի՜նք. խաբօղ, 'ի բաց կաց,
Բաւական է. լոյս մնաց իմոց ծագեաց.
Եթէ քան զդևս քրիստոնեայ մեծ է,
Թէ մեծ ևս Քրիստոս իցէ՝ հարկաւոր է.
Այսուհետև զայս քննել կամիմ.
Դու մեծագոյն հոգոյ տեղի թող, սէր իմ,
Եւ զոլով կոյսն հարսնացեալ Աստուծոյ՝
Ցաւէտ զնա սիրել անարժան է մարդոյ.
Կամ զինչ ասեմ. վայել է սիրել.

digitised by A.R.A.R.@

Բայց այլ կերպիւ։ Զխորհուրդս ծածկել
Պարտ է թագաւորին՝ որ մատչի։ (Եւեթ կարէն)։

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ՏՐԴԱՏ, ԳԱՅԻԱՆԷ

Տրդատ. Գայիանէ,
Զքեզ հրամայեցի աղատել 'ի բանտէ
Եւ ասա ածել. գիտես զխորհուրդ իմ՝,
Գիտել կարէիր յինէն, ասել ամաչեմ.
Թէպէտ մահապարտ իցես և Հռիփսիմէ.
Արդարադատ լինել չկարէ՝ որ սիրէ.
Մեծ քան զմեզս ձեր դժուար է խորհիլ.
Թէպէտ հազար անգամ կարէիր մեռանիլ
Ցանջիլ յաւիտեանս, պատիժ ոչ ինչ էր,
Անասելի մեղաց միշտ անհաւասար էր.
Արհամարհել զԱստուածս, զտաճար աւերիլ,
Հերք դիզակուտին՝ միայն 'ի լսել,
Զիս խաբել այսպէս, որ պատրաստէի
Պսակել զՀռիփսիմէ և առնել դշխոյ.
Ո՞վ հաւատացեալ էր. ինքն 'ի դղուած (՝).
Հազիւ ոչ մեռայ. սակայն գթած
Ցանմտութիւն ձեր՝ հաստատեցի խնայել,
Դիմեցի 'ի բանդ, ջանացի յորդորել,
Ա՛ռ 'ի ապաշաւել զխստասիրտ Հռիփսիմէ.
Խոստացայ, սպառնացայ. ասել զինչ պիտոյ է,
Վկայ ևս եղեր. բաց 'ի նախատանաց՝
Ոչինչ կարացի շահել. անարգեաց
Զմեզ մատուցեալ և զառագաստ իմ։
Զինչ յաւէտ արարից. լինել հաւատարիմ
Պարտիմ աստուածոցն. բազում անգամ երդուայ,
Բազում և թղթովք կայսեր խոստացայ
Ոչ երբեք թողուլ իմ արքայութիւն
Զատեալ երկնից խաչապաշտութիւն.
Եթէ չփոխէք, ասեմ յայտնապէս,
Ցեռ յոլով տանջանաց՝ մեռցիք հաստատապէս։
Իսկ վասն քո՝ որում զդաստութեան
Եւ համբաւեալ խորագիտութեան
Ցանձն առեալ եղև աղջիկ իշխանուհի
Հետեւիցես նմա՝ է անհաւատալի։

Գայիանէ. Մինչև վերջ լսեմք։

Տրդատ. Եւ խմաստութիւն
Ցոլով ամաչ շահեալ, զաստուածութիւն
Կարաց ուսուցանել։

Գայիանէ. Որպէս ուսոյց.
Զինչ կամիս յաւէտ։

Տրդատ. Նա ևս ցոյց

digitised by A.R.A.R.@

Ցիմար Հռիփսիմէի, զմիտս լուսաւորեա
Անզգամ կուսին, որ առ մահ ընթանայ.
Զայս խնդրէ 'ի քէն Տրդատ թախանձանաք
Զոր ինչ կարող եմ պարգևաք չնորհաք
Ոչ երախտամոռաց՝ յոյս ունիմ մեռանել։

Գայիանէ. Բաւ է. թագաւորի մեծ փառք է հաճիլ,
Հրամայեա ածել զՀռիփսիմէ. (զի կամիս
Խաբիլ, միւսանգամ արդեաք խաբեսցիս)։

Տրդատ. Ածէք զինուորք զբանդարկեալն կոյս,
Գրաւս բանից իմոց՝ դու ընկալ այժմուս (զշղթայն ոսկեղէն տայ նմա)։
Փոխանակ երկաթի՝ որ զքեզ առաջ կապեաց,
Զայս նշան սիրոյ ընկալ իմոց ձեռաց.
Մինչև զայլ գտից զվարձ քո արժանագոյն։

Գայիանէ. Թէպէտ յետ գործոյ կամիմ զվարձ մեծագոյն,
Ընդունիմ սակայն. (առ գքեզ ամօթ առնել՝
Եւ այս օգուտ է. չղթայս բերել
Զեռքս սովորեցան). իսկ դայ Հռիփսիմէ։

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

Տրդատ. Հռիփսիմէ. Գայիանէ

Տրդատ. Գեղեցիկդ ամբարիշտ, ուրեմն անհնար է՝
Թէ մտցէ 'ի քո սիրտ լոյս ճշմարտութեան.
Մինչ ապստամբ ես աստուածութեան,
Մինչ երախտամոռաց անթիւ պարգևաց,
Զորս, անարժան, առեր յառատաբուխ ձեռաց
Անմահ աստուածոց։ Ապա ժամանակ է
'Ի միտս քո դառնալ, և որպէս Գայիանէ՝
Ճշմարտասէր լինել և մեր բարեկամ.
Ինքն խօսեսցի։

Հռիփսիմէ. Զինչ լսեմ. անզգամ,
Ուխտադրուժ կոյր, զքեզ խաբել կարաց
Գարշելիդ բանաւոր։

Գայիանէ. Դուստր։

Հռիփսիմէ. Դուստր դիւաց,
Զինչ կայ իմ և քո, կռապաշտ։

Գայիանէ. Ցաղթել միայնակ կամիս. պիտոյ է լսել,
Եւ յետոյ խօսիլ. քեզ խոստացեալ եմ
Զաստուածութիւն ցուցանել, վճարեմ.
Որում անծանօթ է՝ բարւոք լուիցէ.
Տեսանեմք զերկինս շարժիլ, և յայլմէ
Թէ շարժին՝ իմանամք. զի ոչ ինչ շարժի
Ցիւրմէ ինքեանէ, որ ոչ է կենդանի.
Ուրեմն, այդ շարժող անշարժ է Աստուած.
Եւ այդ Աստուած ամենակատար է,
Որոյ յաշագս մի, անհաս և անքաւ է,
Անեղ, անժամանակ և գերապարզ հոգի.

digitised by A.R.A.R.@

Ոչ երկաթ, ոչ փայտ, ոչ արծաթ և ոսկի,
Ոչ անըզգայ պատկերք . . . .

Տրդատ. Բաւական է, խաբօղ,
Եթէ չլռես . . . :

Գայիանէ. Քրիստոսի ուրացօղ .
Զիս կարծէիր թերևս՝ վասն քո ոսկւոյ.
(Առնու ձգէ զպարգևեալ շղթայն ոսկեղէն՝ Գայիանէ):
Ա՛ռ և պահեաց, քեզ յաւէտ է պիտոյ
Ոսկեղէն շղթայիւք 'ի դիւաց կապեալ
Թագաւոր առ աչօք, գերի ես պսակեալ.
Ուսիր . . . :

Տրդատ. Աւելորդ է, զինուորք . . . :

Հռիփսիմէ. Սուգիւ,
Ցաղթեցեր, Գայիանէ:

Տրդատ. Սաստկապէս քարիւ
Զհայհոյիչ բերան ջարդեցէք:

Գայիանէ. Վարձատրիմ՝
Որպէս կամէի:

Հռիփսիմէ. Պատուելով զմայր իմ,
Զիս ապաքէն թողուս անպատիւ վասն էր:

Տրդատ. Ի բանդ դարձուցէք: Ո՛վ անարժան սէր,
Մինչև ցե՞րբ անարգիլ 'ի կանանց յիմարաց
Զիս տացես . . . :

Հռիփսիմէ. Հեռանալ 'ի քո զազիր աչաց
Է ինձ մեծ ձիր. ողջ լեր:

ՏԵՍԻԼ ՉՈՐՐՈՐԴ

ՏՐԴԱՏ ՄԻԱՅՆԱԿ

Տրդատ. Անօրէն,
Կարէ՞ք այսպէս հեռանալ ես 'ի քէն,
Եւ զքեզ մերժել յայս սուր սրտէ.
Իսկ զի՞նչ առնել. քրմապետ կշտամբէ,
Մօրմոքի ժողովուրդ, զերդ մոլիս յիշեմ,
Զխնդրուած կայսեր, յուսահատեալ եմ.
Թէ մեռցիս, Հռիփսիմէ, պարտ է. բայց ընդէ՞ր.
Եթէ առանց քո կեալ Տրդատ կարէր՝
Ցիրաւ էր. իսկ յորժամ ինքեան դատաւորին
Անմեղի՝ մահ է պատիժն յանցանողին,
Զիա՞րդ հարկաւորի զինքն իւր սպանանել
Անպարտն դատաւոր: Զի՞նչ իցէ սիրել՝
Դուք գիտէք, աստուածք. բոց անշիջանելի
Բորբոքեաց երբեմն և 'ի ձեր սրտի.
Ինձ ողորմեցարուք: կամեսցի՞ն ողորմիլ
Արհամարհեալ աստուածք . . . Ո՛հ, պարտ է մեռանիլ
Ամբարիշտ կուսին. խորանք բեկեալք,
Գլորեալ տաճար, և կուռք փշրեալք՝

digitised by A.R.A.R.@

Արիւն խնդրեն, Հռիփսիմէ. իսկ 'ի քուն
կամ յարմնութեան իմ, այս անուն
Զիս իսկոյն փոխէ. գեղեցիկ կեաց,
Զի ես ընդ քեզ կեցցեմ. խիղճ մնաց,
Ընդ-Էր զիս տանջես. արդար գոլ պարտիմ,
Գիտեմ, երդուեայ լինել և կամիմ.
Բայց սէր, կայսր, աստուածք, Հռիփսիմէ
Զինչ կամիք յինէն. ով 'ի ձէնջ յաղթեսցէ.
Թէ ձեզ ամենեցուն պարտական է Տրդատ,
Տուք թէ վճարել կարասցէ. 'ի պաղատ
կոչել յետին անգամ պիտոյ է զՀռիփսիմէ.
Զայլ խրատ առնուլ՝ թէ անհնազանդ է։

Աւարտն միւսանգամ։

ՔԵՐԴՈՒԱԾՔ

ՂՈՒՆԿԻԱՆՈՍ ԵՐԳՉԻ ԿԱՐՆԵՑՒՈՅ

ՄԱՂԹԱՆՔ ԱՌ ՅԻՍՈՒՍ

Ա· ԻԼԱՀԻ

Կէնէ անձրս խիստ է տրրտում, զիս կը նեղէ, Փրրկիչ իմ,
Տրխուր դէմքըս տես, խղճացու, քաղցրր մրխիթարիչ իմ.
Քանզի, ով Տէր, չիք ոք այլ յոյս և սպասէն բաց 'ի քէն.
Վըշտաց ծովով կ'ալէկոծիմ, եկ փրրկէ՝ ազատիչ իմ։
Արդարոց, սրրբոց ողորմիս, կեցուցանես՝ ոչ մեծ է,
Զի արժան են ողորմութեան. մեղաւորիս հոգ ածէ.
Ըսպանչացա գըթութիւնըդ, աղքատը քեզ թողուած է,
Անկելուն դու ես ձեռնտու, Յիսուս սէր իմ, օգնիչ իմ։
Աշխարհային սէրը սրրտէս հանէ, հեռացու, մաքրէ,
Հոգիս լաւ վարքով ծաղկեցու, շընորհքներով զարդարէ.
Իմ փափաքըս, իմ կարօտըս, վառուելըս քեզ համար է.
Մըտքով, սրտով կեանքըս անցաւ, բարերար արարիչ իմ։
Ղունկիանոսին գութըդ շարժէ, չարչարանացըդ պատիւ,
Վէրքերըս սըղըամիչ կ'ըլլան, ցաւերս են շատ և անթիւ.
Դարձո լացըս յուրախութիւն, գիշերըս փոխարկէ տիւ,
Ցաւքայութեան մէջ հանգչեցո նեղեալըս, անդորրիչ իմ։

Բ

Զեն մի սակայ, չեն մի դողայ, թըշնաառ անձն իմ աներես,
Որ ձեռքովըդ արքայութեան դուռը վըրաս փակեր ես.

digitised by A.R.A.R.@